## ԳԼՈՒԽ ՅԽԴ.

Սա լինիցի նշան յանկարծակի հարկաւորութեան, զի որում աւուր դրօշակ գնտոյ ցուցանէ յեղձուցեալ կախեալ 'ի փայտէ և թնդանօթ մի վառեալ, պարտ է ամենայն զինուոր 'ի այս գնտէ և դրօշակէ ընդ մէջ կալեալ և զինուորեալ պատրաստ 'ի յոտս կացցէ և սպասէ հրամանի գնդապետին իւրոյ, և եթէ 'ի գիշեր պարտ է հուր արկանել ընդ հարթ 'ի տեղի դրօշակի, և երեք թնդանօթս վառել, ծանիցէ նոյն որպէս ասացի վասն ցերեկի։

## ԳԼՈՒԽ ՅԽԵ.

Ամենայն բնութիւն մարդոյ զոր ինչ պաշտօնի և կառավարութեան որ իցէ մինչև ցտեառք տանց և հասարակ ընտանեաց որ ոք ծախ վասըն կարեաց անձանց, որ ոք հատուցում ռոճկաց 'ի սպասաւոր և աղախնեաց (բայց հարկից և մաքսից), զոր ինչ դրամ եթէ ոսկոյ և երծաթէ և պղնձէ և լոմանէ որ 'ի ձեռանէ իւրմէ հատուցանել պարտաւորեսցի վասն ծախելոյ 'ի վերայ հարկաւորութեան իւրոյ, և հատուցանելոյ գին գնեցելոյ իրաց վասն ծախի իւրոյ և ռոճկի որ ոք պաշտօնի և կամ սպասաւորի, ունի ազատութիւն հանել տասանորդս, մնացորդն միայն հատուցանել ում որ իցէ։